

ՈՂՋ ԼԵՐ, ՄԱՐԻԱՄ

(«La chiesa di polenta» քերթուածէն հատուած մը)

..... Գիւղէն. կը դողանջէ
Զանգն ազդարար: Զանգակաւորուն յարուցեալ
Բլրէ բըլուր կ'երգէ գիւղին՝

ՈՂՋ ԼԵՐ, Մարիամ:

ՈՂՋ ԼԵՐ, Մարիամ: Երբոր ողջոյնը խոնարհ
Զեփիւռներու թեւերուն վրայ կը սուրայ,
Գլուխ կը բանան մահացուները տըխեղծ
Տանդէն ու Հարութ:

Սըրինգներու մեղմ եւ յուշիկ մեղեդի՝
Կ'անցնի անտես՝ երկնից, երկրիս ընդմէջէն.
Թրգ. Տ. Ե. Փ.

Ոգինե՞ր են երբեմնի, որ դեռեւս կան,
Ու պիտի'լլան

Ու մոռացօք մ'անոյշ կեանքի տաժանքին,
Հաւաչ մ'անդորր խոկումներով պատարուն,
Արտասուելու կաթոգին տենչ մը հեշտին,
Հոգին ամբողջ կը պատեն:

Գազան, անբան, իր, կը լըռեն: Վարդենի
Վերջալոյսն արդ կապոյտին վրայ կը ներկուի.
Կը մըմնջեն ալետատան բարձունքներն,
ՈՂՋ ԼԵՐ, Մարիամ:

G. CARDUCCI

ՅՈՒՇԱՏԵՏՐԻ ՄԸ ԷԶԵՐԷՆ

ԿԱՄՔ ԵՒ ԳՈՐԾ

Թըռչունի թեւ կ'ուզեմ ես,
Ճըռուողական դայլայիկ,
Ծաղիկներու բոյրն ու տես
Գոյն քան ըզգոյն գեղեցիկ:

Թագ մը կ'ուզեմ ոսկեհոռ,
Արքունական ծիրանի,
Մեծ միտքերուն հանճար սուր,
Անոնց համբաւն անուանի:

Փառքն ունենալ կ'ուզեմ դեռ
Առաքինւոյն և պարծանք,
Եւ քան ամէն ինչ ի վեր՝
Պատիւ անձիս ու յարգանք:

Կ'ուզեմ... և ալ ի՞նչ գիտնամ,
Բայց խենդ միայն ուզելու՝
Պարտքերու մէջ շատ անգամ
Կը գըտնուիմ զանցառու:

Ի՞նչ շահ միայն ուզելէն՝
Եթէ ոչ խօլ մի պատրանք,
Քանի որ դեռ լըրջօրէն
Զուլիմ տոկուն աշխատանք:

Ո՛չ, կամք միայն չի բաւեր,
Եթէ ստուգիւ կ'ուզեմ ես
Դիրք մ'ունենալ պատուաբեր՝
Հարկ է քըրտնիմ մեծապէս:

ՌիւՍԼԻՏ

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԿԱԻՇ

Տըղայ մը ձեռքն առած կաւ
Ըզբօսանքի պատճառաւ,
«Ի՞նչ ես, կ'ըսէր, դու ի՞նչ ես
Որ անուշ հոտ կը բուրես»:

Պատասխանեց նա իսկոյն.
«Կաւ եմ անարգ, յետագոյն,
Բայց վարդերու հետ քընքուշ
Կ'ապրիմ ես հեշտ ու անոյշ»:

— Թէ սիրտ ունիս երկաթի,
Կ'ուզե՞ս փոխել զայն ոսկի.
Բարի և կիրթ հոգիներ
Միշտ ունեցիր քեզ ընկեր:

Թրգ. Տ. Թ. ԹՈՎԱԾԱՆ

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ

(Շար. տես «Բազմավէպ» 1932, էջ 178)

Խեղճ բանաստեղծն իր ամուրի կեանքէն
տնտեսական տագնապալի կացութիւն մը
ժառանգած էր. ահագին պարտքեր ունէր,
որոնց համար քանիցս, տանը մէջ, կնոջը
ներկայութեան դատական հետապնդումնե-
րու ենթարկուած էր, կարասիները պաշ-
տօնապէս գրաւի տակ առնուած էին, և
չէր կրնար նաեւ ժառանգած կալուած-
ներն ու հողերը ծախելով այդ տխուր
կացութենէն փրկուիլ՝ քանի որ անոնք
եւս, տակաւին նախորդ լորտին ձգած
պարտքերուն փոխարէն գրաւուած էին:

Այս պայմաններուն մէջ, Լէյտի Պայ-
ըն իր ծնողքէն հրահանգուած և անոնց
սպասուհիին օգնութեամբ աղջիկը հետն
առնելով՝ իր հայրենական գիւղը, Սիհամ
բաշուեցաւ: Երեկոյեան դէմ Լորտ Պայըն
տուն վերադարձին, ընտանեկան բոյնը
դատարկ գտաւ: Անմիջապէս Ատային նըն-
ջասենեակը վազեց, ուր անկողին վրայ
գնդասեղով զարնուած նամակ մը գտաւ.
կնոջը գիրն էր, որով կ'իմացնէր թէ՝
Ատային հանգստութեան և իր առողջու-
թեան համար քիչ մը ատեն ծնողաց տունը
կ'երթար:

Մեկնած էր՝ առանց միաս բարովի և
առանց որ հայրը անգամ մ'ալ համբու-
րէր իր աղջիկը, Ատային անոյշ և ժըպ-
տագին աչքերը: Յաջորդ առաւօտուն Պայ-
ըն կնոջմէն նամակ մը կը ստանար,
համբաւէն գրուած, որուն մէջ քաղցր ոճով
մը ցաւ յայտնած էր մեկնելուն համար,
և յուսամ թէ, զրբէր էր, քիչ ատենէն
դուն ալ Միլպանքներու բնակարանը կու
գաս մեզի հետ հանգչելու և կազդուր-
ուելու:

Երբորդ առաւօտը զօրաւոր հարուած
մը՝ իջաւ Պայընի սրտին, երբ իր անե-
րոջմէն վերջնագիր մը ստացաւ պաշտօ-
նական դրոշմաթուղթի վրայ գրուած,
որով կը հաղորդէր իրեն թէ՝ անխոստո-
ւորով կը պատճառներով, որոնց միակ պա-
վանելի պատճառներով, որոնց միակ պա-
տասխանատուն ինքն էր, անհրաժեշտ
նկատուած էր կեանքի և ընչից վերջնա-
կան բաժանում մը և թէ իր կինն ու
աղջիկը վերստին տեսնելու յոյսեր պէտք
չէր տածել այլեւս:

Պայընի մահէն վերջ հրատարակուած
մտերիմներու յիշատակներէն և իր թըղ-
թակցութիւններէն դատելով կարելի է
բացարձակ համոզում գոյացնել թէ՝ Պայ-
ըն բոլորովին անգիտակ էր մարդակերպ,
ընդհանրապէս հրեշտակագեղ հրէշներու
աւելի ճիշտը՝ հրեշտակագեղ հրէշներու
լարած թակարդներէն և կը կարծէր որ
Լէյտի Պայըն իսկապէս ջղային սրտնե-
ղութեան մը մէջ լքած էր տունը՝ քիչ մը
ատեն հանգչելու համար:

Մարդկրօն անգլիացիներն ու անգ-
լուհիները մոռցան թէ Պայընը քիչ ա-
ռաջ համբաւի պատուանդանի կատարը
բարձրացուցած էին. յետագարձ շարժու-
մով անխնայ հարուածեցին զայն ու փոր-
ձեցին թաւալել զրպարտութեանց տիղմին
մէջ: Բարոյականի այդ ինքնակոչ աւ-
պետները առանց երբեք գիտնալու բուն
պատճառը Լէյտի Պայընի բաժանման,
կարծեցին արդարութեան վճիռը գործա-
դրել զլիաւառելով նախ զրպարտուած Պայ-
ընը, և ապա փորձելով այդ վատութեան
բընը, և ապա փորձելով այդ վատութեան
արդարացումը փնտռել՝ իրենց յօրինած
ազտոտ յերիւրանքներն իբր ճշմարտու-
թիւն հռչակելով: Սակայն ի վերջոյ միա-